http://cfoa.am

Համայնք-ՀԱՄԱՏԵՂ

http://celog.am

ՀԱՄԱՏԵՂ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Նոյեմբեր 2019, թիվ 6 (130)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

2019թ. նոյեմբերի 18-22-ը Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Հայաստան էր այցելել Ուկրաինայի Հանրապետության Գերագույն Ռադայի պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին Գերագույն Ռադայի Պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, տարածքային զարգացման եւ քաղաքաշինության կոմիտեի քարտուղարության ղեկավար Անժելա Մալյուգան, ղեկավարի տեղակալ Յուրի Գարբուզը, գլխավոր խորհրդականներ Հայկ Ստեփանյանը եւ Իրինա Գեւորգովան:

Նոյեմբերի 22-ին ուկրաինական պատվիրակությունն այցելեց նաեւ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ (ՀՖՄ) գրասենյակ՝ հանդիպելով ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյանի եւ փորձագիտական խմբի ղեկավար Վահրամ Շահբազյանի հետ:

Վ. Մովսիսյանը, հանդիպման սկզբում ողջունելով պատվիրակության անդամներին, հակիրճ պատմեց ՀՖՄ գործունեության, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի պատմության, գործող համակարգում առկա խնդիրների, բարեփոխումների եւ հեռանկարների մասին:

Պատվիրակության ղեկավար Անժելա Մալյուգան ներկայացրեց պատվիրակության այցի նպատակները եւ խնդիրները, հակիրճ պատմեց տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման բնագավառներում Ուկրաինայում ընթացող բարեփոխումների հաջողությունների ու դժվարությունների մասին:

Պատվիրակության անդամներին հատկապես հետաքրքրում էին Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտության հիմնավորումների, դրանց ընթացքում ծագած խնդիրների եւ վերջիններիս լուծման եղանակների վերաբերյալ հարցերը: Հանդիպման մասնակիցների միջեւ հետաքրքիր մտքերի փոխանակություն կատարվեց համայնքների միավորման գործընթացում հանրային կարծիքը պետական իշխանության ներկայացուցչական եւ գործադիր մարմիններին լսելի դարձնելու տարատեսակ մեթոդների, բազմաբնակավայր նոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) ձեւավորման համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի առավելությունների ու թերությունների, միավորված համայնքների բնութագրիչների (բնակչության թիվ, վարչական տարածքի չափ, ենթակառուցվածքների առկայություն եւ այլն), նոր ձեւավորված համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների ծավալի, ապակենտրոնացման հնարավորությունների, նրա կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների ընտրովի կամ նշանակովի լինելու կառուցակարգերի ու ընթացակարգերի եւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

Հանդիպման վերջում, ուկրաինական պատվիրակության ղեկավար Անժելա Մալյուգան շնորհակալություն հայտնեց ՀՖՄ ներկայացուցիչներին ընդունելության եւ բովանդակալից զրույցի համար, հրավիրեց փոխադարձ այց կատարելու Ուկրաինա՝ համագործակցությունը շարունակելու, տեղական ինքնակառավարման բնագավառում եւ վարչատարածքային բարեփոխումներում երկու երկրներում ծագած խնդիրները քննարկելու եւ դրանց համատեղ լուծումներ գտնելու նպատակով:

ՀՖՄ նախագահ Վ. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց պատվիրակության անդամներին՝ ՀՖՄ այցելելու եւ շահագրգիռ քննարկում ունենալու համար, սիրով ընդունելով ուկրաինական հյուրերի հրավերը:

ՎԱՀՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ՀՖՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ ՀԱՄԱԼՐՎՈՒՄ Է

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման սկզբից՝ 1996 թվականից, Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) իրականացնում է ՀՀ ՏԻ համակարգի մոնիտորինգ եւ պատրաստում տարեկան զեկույցներ դրա վերաբերյալ: Սկսած 2004 թվականից՝ ՀՖՄ-ն հրատարակել է այդպիսի տասը գիրք, որոնցից յուրաքանչյուրում ներառվել են մեկ կամ մի քանի տարիների զեկույցներ, եւ տրվել են ՏԻ համակարգի տարեկան վերլուծությունները եւ գնահատականները, ինչպես նաեւ դրանց հիման վրա արվել են համապատասխան եզրակացություններ եւ առաջարկություններ:

ՏԻ համակարգում յուրաքանչյուր տարի իրականացված բարեփոխումների հետազոտումն ու գնահատումը կատարվել է ՀՖՄ փորձագիտական թիմի կողմից մշակված ու պարբերաբար լրամշակված մեթոդաբանության հիման վրա: Համակարգային բարեփոխումների վերլուծության ու գնահատման համար հիմք են ընդունվել տվյալ տարում ՏԻ ոլորտում գործող ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կառավարության ծրագրերի ու միջազգային կազմակերպություններում նրա ստանձնած պարտավորությունների կատարումը, ՏԻՄ-երի գործունեության արդյունքները, ՏԻ պարտավորությունների կատարումը: էջ 2 ➔

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ. ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

Շարունակվում են «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի (ՏԺԴ-ի) մարզային փուլերը: «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ը, որի նպատակն է պատրաստել նոր տիպի մտածողությամբ եւ ունակություններով երիտասարդ առաջնորդներ ու աջակիցներ, որոնք պատրաստակամ են մասնակից դառնալ համայնքային գործընթացներին եւ պատասխանատվություն ստանձնել իրենց համայնքների զարգացման համար, հանդիսանում է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի բաղադրիչը: Դպրոցն իրականացվում է երեք գործընկեր կազմակերպությունների՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ), «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» (ԵՀՀ) եւ «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի (ՏՀԶՎԿ) կողմից:

Մարզային դասընթացների հերթական փուլերն անցկացվեցին Շիրակի եւ Արմավիրի մարզերում, որոնց մասնակցեցին մի քանի տասնյակ երիտասարդներ: Իսկ մասնակիցների ընտրությունը, ինչպես մյուս մարզերում, այստեղ եւս իրականացվել էր համաձայն նախապես մշակված կանոնակարգի: Անփոփոխ են նաեւ դասախոսությունների թեմաները: էջ 4-5 ➔

← էջ 1

ՀՖՄ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ

Լույս է տեսել «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում»

Հրատարակված «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» 10 գրքերի բովանդակությունը կազմվել է ՏԻ բնագավառի առանձին 7 ուղղությունների վերաբերյալ ՀՖՄ եւ անկախ փորձագետների կատարած ուսումնասիրությունների եւ վերլուծությունների հիման վրա՝ տարեկան զեկույցի առանձին բաժինների տեսքով: Համաձայն մեթոդաբանության, դրանք բոլորն էլ կազմվել են նույն ձեւաչափով եւ պարունակել են նաեւ ՀՀ ՏԻ բարեփոխումների գնահատականներն՝ ըստ ՏԻ առանձին բնագավառների:

Ս.թ.նոյեմբերի 12-ին տեղի ունեցավ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքի՝ 2018 թվականին վերաբերող 11-րդ հրատարակության շնորհանդեսը, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ), միջազգային եւ տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, ուսանողներ...

Այդ օրվան անհամբերությամբ էին սպասում ՀՖՄ փորձագիտական թիմը եւ կազմակերպության նախագահ Վահան Մովսիսյանը:

Ողջունելով ներկաներին՝ ՀՖՄ ղեկավարը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցել են գրքի հերթական համարի հրատարակմանը, եւ եւս մեկ անգամ խոսեց հրատարակության անհրաժեշտության ու կարեւորության մասին:

«Տեղական ինքնակառավարման համակարգում ուսումնական ձեռնարկ գրեթե գոյություն չունի: Կա ընդամենը մեկ տպագիր գիրք՝ «Տեղական ինքնակառավարման հիմունքները», որն արդեն 20-ամյա պատմություն ունի: «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գիրքը ուսանողներին, ասպիրանտներին հնարավորություն է տալիս այս ոլորտում իրենց աշխատանքները գրելու, մշակելու ժամանակ օգտվել այն մեծ տեղեկատվական բազայից, որն այստեղ գոյություն ունի: Մեզ համար մեծագույն հպարտություն է, երբ տեսնում ես ուսանողի աշխատանք,որ ուղարկել են գրաքննելու կամ գիտական թեզ, որի վերաբերյալ պետք է կարծիք հայտնենք, ու օգտագործված գրականության ցանկում անպայման լինում է մեր այս գրքի անունը»,- հպարտությամբ նշեց Վ. Մովսիսյանը: Վերջինս հավելեց, որ գիրքն օգտագործում են նաեւ ՏԻ ոլորտի փորձագետները, համապատասխան նախարարության պաշտոնյաները, ինչպես նաեւ միջազգային կառույցները:

Վ. Մովսիսյանն անդրադարձավ գրքի թվայնացված տարբերակին, որի մտահղացման հեղինակը ՀՖՄ փորձագետ, երջանկահիշատակ Դավիթ Թումանյանն է: «Նման փորձ երբեք չէր եղել, եւ Դավիթի հիշատակի համար ձեռնարկեցինք այդ գործը, որը բավական ջանք էր պահանջում: Մենք գնում էինք մի ճանապարհով, որը երբեք տրորված չէր, եւ փորձեցինք արված հսկայածավալ աշխատանքը տեղափոխել թվային գնահատման հարթակ:

Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի (ՏԻՏԻ) հաշվարկումը նպատակ ունի հնարավորինս համապարփակ գնահատել համակարգի տարեկան գործունեությունը՝ ՀՀ կենտրոնական կառավարության, քաղաքացիական հասարակությանը եւ այլ շահագրգիռ կողմերին տրամադրելով ՏԻ տարեկան գործունեության թվային գնահատական՝ ինդեքսի կամ համաթվի տեսքով»,- ամփոփեց ՀՖՄ ղեկավարը:

Գրքի կարեւորությունը շեշտադրեց նաեւ ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիզերը՝ նշելով. «Այս տարեկան զեկույցը շատ կարեւոր գործիք է Հայաստանի համար: Դա եւ՛ վերլուծություն է, եւ՛ գնահատական՝ ոլորտի փոփոխությունների եւ համայնքների վերաբերյալ: Այն ներառում է համապարփակ տվյալներ՝ եկամուտների, ծախսերի, ակտիվների եւ ծառայությունների վերաբերյալ: Թե՛ ոլորտի փորձագետները, թե քաղաքականություն մշակողները կարող են այն օգտագործել իրենց վերլուծություններում եւ առաջարկություններում՝ ավելի տեղեկացված եւ արդյունավետ որոշումներ կայացնելու համար: Զեկույցը երկլեզու է, ինչը հնարավորություն է տալիս միջազգային հանրությանը հեշտությամբ ստանալ տեղեկատվություն Հայաստանի զարգացման եւ բարեփոխումների վերաբերյալ»:

Գրքի 11-րդ հրատարակության բովանդակության մասին առավել մանրամասնորեն խոսեց ՀՖՄ փորձագիտական թիմի ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու, գրքի խմբագիր Վահրամ Շահբազյանը:

«Սույն գիրքը, որը հրատարակվել է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, ՀՀ ՏԻ համակարգի վերաբերյալ ՀՖՄ-ի՝ թվով արդեն 11-րդ հրատարակությունն է: Այն նվիրված է ՀՀ ՏԻ համակարգում 2018թ. ընթացքում իրականացված բարեփոխումների հետազոտմանը եւ լուսաբանմանը՝ վերհանելով ՏԻ բնագավառում առկա հիմնախնդիրները եւ միտումները, հանգելով որոշակի եզրակացությունների եւ ներկայացնելով այդ հիմնախնդիրների լուծմանն ու բարեփոխումների շարունակմանն ուղղված համապատասխան առաջարկություններ»,-նշեց փորձագիտական թիմի ղեկավարը եւ հակիրճ ներկայացրեց գրքի 8 բաժինները:

Բանախոսը նախ անդրադարձավ տեղական ինքնակառավարման ոլորտի իրավական վերլուծությանը, նշելով, որ մեր օրենսդրությունը կամաց-կամաց բարելավվում է, բայց խնդիրներ դեռեւս մնում են, ինչպես օրինակ՝

1. Համայնքների միավորման կամ բաժանման մասին օրենք ընդունելիս, ՏԻ բնագավառի օրենսդրությունում իր ամրագրումը չեն ստացել համայնքների լսված լինելու իրավունքի իրացման մեխանիզմները:

2. «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» սահմանադրական հասկացությունն իր հետագա կոնկրետացումը չի գտել ՀՀ օրենքներում:

3. ՏԻ բնագավառի օրենսդրությամբ կարգավորված չէ ուղղակի ընտրակարգով ընտրված համայնքների ղեկավարների քաղաքական պատասխանատվության հարցը:

4. 2018-ին ընդունված «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը անդրադառնում է ՄՀՄ-ների ինստիտուտին, սակայն ՄՀՀ-ի այլ տեսակներին ՀՀ օրենսդրությունում որեւէ անդրադարձ չկա (ՏԻԵԽ-ի պահանջ):

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման ծրագրային գնահատմանը, ապա այստեղ, երկրում տեղի ունեցած քաղաքական գործընթացներով պայմանավորված, որոշակի բացթողումներ են եղել, եւ 2018-ին ՀՀ ՏԻ բնագավառում, ըստ էության, էական առաջընթաց չի արձանագրվել ներպետական ծրագրերի իրականացման, միջազգային պարտավորությունների կատարման առումով:

2018-ին էական առաջընթաց է արձանագրվել համայնքների կողմից սուբվենցիոն ծրագրերի հայտերի ներկայացման, քննարկման, հավանության արժանանալու եւ ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման առումով.

-117 համայնքներից ստացվել է ընդամենը 230 հայտ,

- Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 180 հայտ, որոնց ընդհանուր գումարը կազմել է 6,832 մլրդ դրամ, այդ թվում 3,642 մլրդ դրամ՝ համայնքներ, 2,856 մլրդ դրամ՝ ՀՀ պետական բյուջե, 298,3 մլն դրամ՝ մասնավոր հատված,

-Իրականացվել է 152 ծրագիր, որոնց ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1,620 մլրդ դրամ գումար, 25 ծրագրերի իրականացումը եղանակային պատճառով տեղափոխվել է 2019թ.:

Անդրադարձ կատարվեց նաեւ ՏԻ բնագավառի պատասխանատու պետական մարմինների գործունեությանը, որտեղ

էջ 3 →

ԱՇՈՏ ԳԻԼՈՅԱՆ
ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ

ՍԱ ԻՄ ՍԵՂԱՆԻ ԳԻՐՔՆ Է

Իմ եւ ՏԿԵՆ անունից շնորհակալություն եմ հայտնում Համայնքների ֆինանսիստների միավորմանը՝ գրքի հրատարակման համար եւ ԱՄՆ ՄԶԳ-ին՝ հրատարակությանն աջակցելու համար: Մեծագույն ձեռքբերում է, որ գիրքը տպագրվում է ամեն տարի՝ անդրադառնալով ու վերլուծելով տվյալ ժամանակահատվածում ոլորտում կատարված բարեփոխումները: Գիրքը պարունակում է կարեւոր տեղեկատվություն, որն օգտակար է թե՛ մասնագետներին, թե՛ ոլորտի ներկայացուցիչներին, ՏԻՄ-երին: Լինելով երկլեզու՝ գիրքը լավագույն աղբյուր է նաեւ միջազգային կառույցների համար:

«Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» հրատարակությունը նաեւ իմ սեղանի գիրքն է, եւ ես պարբերաբար օգտվում եմ այնտեղ առկա մեծածավալ բազայից:

Շատ կարեւոր է, որ ՀՖՄ փորձագետները շարունակում են իրենց գործընկերոջ՝ երջանկահիշատակ Դավիթ Թումանյանի գործը, ումից ես շատ բան եմ սովորել:

Շնորհավորում եմ ՀՖՄ-ին եւ կրկին շնորհակալություն ԱՄՆ ՄԶԳ-ին, որ կանգնած է ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի կողքին՝ իրականացնելով տարբեր ծրագրեր:

ՇԱՐՔԸ ՀԱՄԱԼՐՎՈՒՄ Է

գրքի հերթական համարը



🡐 էջ 2

նույնպես որոշակի պասիվություն է նկատվել, հատկապես՝ ներկայացուցչական մարմնի դեպքում:

Գրքի երկրորդ բաժինը վերաբերում է ՀՀ վարչատարածքային բաժանմանը եւ միջհամայնքային համագործակցությանը:

2018-ին վարչատարածքային բարեփոխումների գործընթացը սառեցված էր, եւ նոր վարչատարածքային միավոր չի գրանցվել, սակայն ակնկալվում է, որ վարչատարածքային բարեփոխումները ՀՀ-ում կշարունակվեն:

Ինչ վերաբերում է միջհամայնքային համագործակցությանը, ապա ըստ 2018թ. մարտի 7-ին ընդունված «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի՝ ՄՀՄ-ներ կարող են ստեղծվել երկու սկզբունքով՝

1) կամավոր՝ համայնքների ավագանիների կողմից՝ երկու եւ ավելի համայնքների ՏԻՄ-երի նախաձեռնությամբ,

2) օրենքով՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ եւ առաջարկությամբ:

Սակայն 2018-ին դեռեւս որեւէ ՄՀՄ չի ստեղծվել (ոչ կամավոր եւ ոչ էլ օրենքով), եւ դեռեւս չի մշակվել ՄՀՄ-ի կանոնադրության օրինակելի ձեւի նախագիծ, որը պետք է ներառի ՄՀՄ անդամ համայնքների բյուջեներից ՄՀՄ-ի ֆինանսավորման սկզբունքները եւ օրենքի այլ պահանջներ:

Վ. Շահբազյանը նշեց, որ օրենքի ընդունումը էական առաջընթաց է ՏԻ համակարգում, սակայն օրենքը պարունակում է մի շարք խնդրահարույց հարցեր, որոնք կարիք են զգում իրավական խորը վերլուծության եւ գնահատման: Ընդհանուր առմամբ, 2018-ին ՀՀ-ում շարունակել են գործել 3 համայնքների միություններ (42 համայնք) եւ 21 միջհամայնքային կառույցներ (62 համայնք), որոնք վարել են 104 համայնքների հողի հարկի եւ գույքահարկի տվյալների բազաները:

Թե 2018-ի ընթացքում ՏԻՄ-երի քանի ընտրություններ են տեղի ունեցել, բնակչության ինչպիսի մասնակցություն է արձանագրվել, եւ քաղաքացիական հասարակությունը որքանով է մասնակցել տեղական ինքնակառավարմանը, մանրամասնորեն ներկայացված է գրքի «ՏԻՄ-երի ձեւավորումը, լիազորությունները եւ գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը» բաժնում:

Գրքի 4-րդ բաժնում (Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը եւ ֆինանսական անկախությունը) վերլուծված եւ ներկայացված է, թե ինչպիսի կապիտալ ծախսեր են կատարվել, եւ ինչ կապիտալ մուտքեր են ապահովվել, եկամուտների հավաքագրման ինչ փոփոխություններ են արձանագրվել եւ ինչպիսին է եղել ՀՀ համայնքների 2010-2018թթ. բյուջեների եկամուտների դինամիկան:

Ըստ էության, 2018թ. Համայնքային սեփականությունը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1759.0 մլն դրամով կամ 14.3%, որը, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում համալրվել է համայնքների (ներառյալ Երեւանի) բյուջեներից կատարված կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաշվին:

Գրքի 5-րդ բաժնում էլ արտացոլված է ՏԻՄ-երի լիազորությունների եւ համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երեւան քաղաքի) 2018թ. բյուջեների ամփոփ փաստացի կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 93.1%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 89.7%: Ծախսերի մասով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երեւան քաղաքի) 2018թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 83.2%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 77.7%:

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երեւանի) 2018թ. բյուջեների եկամուտների եւ ծախսերի փաստացի կատարողականները 2017թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ եւ՛ եկամուտների, եւ՛ հատկապես ծախսերի գծով դրանք 2018-ին զգալիորեն ցածր են եղել, քան 2017-ին: Սա նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ, 2018-ին զգալիորեն իջել է համայնքների բյուջեների եկամուտների եւ ծախսերի կատարողական ընդհանուր կարգապահությունը:

«Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային եւ տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը» բաժնում ներկայացվում են ՏԻՄ-երի եւ համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները, ՏԻՄ-երի եւ աշխատակազմերի գենդերային բաժանումը, ՀՀ համայնքային ծառայության օրենսդրական հիմքերը:

Համաձայն վերլուծության, 2018թ. ընթացքում ՀՀ համայնքների աշխատակազմերում շարունակել է գերակշռող մնալ համայնքային ծառայողների տեսակարար կշիռը՝ կազմելով փաստացի աշխատակիցների ընդհանուր թվաքանակի (10512 հոգի) կեսից ավելին՝ 5502 հոգի:

2018թ. ընթացքում շարունակել են պահպանվել ՏԻՄ-երում ներգրավված անձանց գենդերային անհամամասնությունն ու կանանց ներգրավվածության ցածր մակարդակի միտումները: Ինչպես եւ նախորդ տարի, հաշվետու տարում ՀՀ 501 (բացի Երեւան համայնքից) համայնքներում կին համայնքի ղեկավար եղել է միայն 8-ում: ՀՀ թվով 371 համայնքների ղեկավարների տեղակալներից կին են ընդամենը 28-ը կամ ընդհանուրի 7.5 տոկոսը: Ավագանիների կազմում գերակշիռ մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներ են:

Գրքի այս հատվածում ներկայացված են նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք նպատակաուղղված են ՀՀ ՏԻ համակարգի շարունակական բարեփոխումների աջակցմանը:

Գրքի հերթական բաժնում էլ խոսվում է համայնքային ծառայությունների գծով 2018-ին կատարված աշխատանքների մասին:

Այնուհետեւ, ՀՖՄ փորձագիտական թիմի ղեկավարը մանրամասնորեն անդրադարձավ տեղական ինքնակառավարման տարեկան թվային գնահատման արդյունքներին:

«2018թ. տարեկան զեկույցի պատրաստման աշխատանքների շրջանակներում փորձագետների կողմից կատարված վերլուծությունների հիման վրա եւ ՀՀ ՏԻ համակարգին տարեկան կտրվածքով թվային գնահատական տալու՝ 2017-ին մշակված ու ներդրված մեթոդաբանության ամբողջական կիրառմամբ, հաշվարկվել է Հայաստանի ՏԻ տարեկան ինդեքս (ՏԻՏԻ՝ համաթվի տեսքով) նաեւ 2018 թվականի համար: Այն հնարավորություն է տալիս հետազոտել ՀՀ ՏԻ համակարգի զարգացումները վերջին երեք-չորս տարիների ընթացքում եւ յուրատեսակ համեմատություններ կատարել 2015-2018թթ. իրականացված համակարգային բարեփոխումների ընթացքի եւ տրված գնահատականների միջեւ»,- նշեց բանախոսը: Նա հավելեց, որ Հայաստանի ՏԻ-ՏԻ-ի հաշվարկվումը հիմնվում է ՏԻ համակարգում ընտրված 5 բնագավառների, 20 գործառույթների եւ 52 ցուցիչների գնահատման վրա: Սույն զեկույցում ներկայացվում է ՀՀ ՏԻՏԻ հաշվարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը 2015-2018թթ. համար:

Շնորհանդեսի ավարտին հնչեցին հրատարակված գրքին վերաբերող բազմաթիվ հարցեր, որոնց տրվեցին մանրամասն ու սպառիչ պատասխաններ:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔԵՇԻՇՅԱՆ

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության պլանավորման ծրագրերի խորհրդատու

ԱՅՍ ԳԻՐՔԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐՆ Է

Շնորհավորում եմ բոլորիս «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» գրքի լույսընծայման կապակցությամբ:

Այս գիրքը երեւի թե միակ տպագիր նյութն է, որտեղ կարելի է տեղական ինքնակառավարման ամփոփ պատկեր ունենալ: Ուզում եմ հույս հայտնել, որ անկախ նրանից, թե կլինի հետագայում դրսի՝ միջազգային ֆինանսավորում, թե ոչ, ես շատ կուզենամ,որ այս փորձագիտական խումբը, որը որակյալ նյութ է հրատարակում, կարողանա շարունակել սրանք լույս աշխարհ բերել, որովհետեւ այս գրքերը շատ կարեւոր են: Ես կարեւորում եմ այս գիրքը նաեւ այն իմաստով, որ քիչ տպված մասնագիտական հրատարակություններից մեկն է, որը գրված է նորմալ հայերենով, առանց վրիպակների, եւ կարդալուց էլ սխալների ու անճշտությունների պատճառով միտքը չի կորում:

Շնորհավորում եմ եւ սպասում եմ նորերին:

ԱՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

ԱՅՍ ԳԻՐՔՆ ՈՒՂՂՎԱԾ Է ՆԱԵՎ ԱՊԱԳԱ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Շնորհավորում եմ ՀՖՄ թիմին: Սա պարզապես գիրք չի, որ տպագրվել է. Ես տեսնում եմ այստեղ մեծ քանակով վերլուծություններ, որոնք ուսումնասիրվել են, խմբագրվել եւ հանձնվել տպագրության: Ես ուզում եմ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իմ գործընկերների եւ ուսանողների անունից շնորհակալություն հայտնել, որովհետեւ այն շատ օգտակար կլինի նաեւ մեր ուսանողներին, որոնք կօգտվեն այս գրքից եւ կկարողանան համեմատել, փոխկապակցվածություններ գտնել, եւ սա հիմք կդառնա նրանց մոտ վերլուծական մտքի զարգացման: Այս գիրքն ուղղված է նաեւ ապագա սերունդներին:

Հույս ունեմ, որ յուրաքանչյուր տարի կշարունակվեն այս վերլուծությունները, եւ մենք կունենանք նոր թվեր, նոր ինդեքսներ, որոնք խթան կհանդիսանան եւ կկարողանանք ավելի լավ աշխատել, ավելի լավ տեղական ինքնակառավարում ունենալ:

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ.

էջ 1

ՀՖՄ-ի, ԵՀՀ-ի՝ ոլորտին գիտակ մասնագետներից կազմված դասախոսական կազմը (Վահան Մովսիսյան, Վահրամ Շահբազյան, Դավիթ Մարգարյան, Միքայել Հովհաննիսյան, Աննա Ղորուխչյան, Կարեն Հովհաննեսյան, Իզաբելլա Սարգսյան, Ջուլյա Սահակյան, Նանե Պասկեւիչյան, Մարինա Այվազյան) դասախոսությունների եւ ցուցադրանյութերի միջոցով ներկայացնում է հետեւյալ թեմաները՝

- ՏԻ-ը ժողովրդավարական արժեքային տեսանկյունից
- Ի՞նչ է տեղական ժողովրդավարությունը
- ՏԻ համակարգի տեղն ու դերը հանրային կառավարման համակարգում
- ՀՀ ՏԻ համակարգի առանձնահատկությունները
- Համայնքի աշխատակազմի կառուցվածքը, կարողությունները, համայնքային ծառայություն
- Քննադատական մտածողություն
- Իրավունքահեն կառավարում
- Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը
- Համայնքի ռազմավարական պլանավորումը ժողովրդավարական արժեքների համատեքստում
- Համայնքի կառավարման գործիքակազմը
- Համայնքի զարգացման ծրագրեր (Համայնքի ռազմավարական ծրագիր, հնգամյա զարգացման ծրագիր, տարեկան աշխատանքային պլան)
- Համայնքի տնտեսական զարգացում
- Համայնքային ծառայություններ
- Համայնքի բյուջե
- Համայնքի զարգացման ծրագրերի եւ բյուջեի մոնիտորինգ եւ գնահատում, բյուջեի աուդիտ
- Ի՞նչ է ծրագիրը եւ ի՞նչ է պետք լավ ծրագրի համար:

Դասընթացների 6 օրերը, որոնք անցկացվում են 2 եռօրյաներով, միայն թեմաների մատուցմամբ չեն սահմանափակվում, կազմակերպվում են նաեւ խմբային աշխատանքներ, մտագրոհներ, վարժություններ, խաղեր, որոնք նպաստում են ստացած գիտելիքների ամրապնդմանը: Օրինակ, «Բյուջետապոլիս» խաղը հնարավորություն է տալիս մասնակիցներին որոշելու համայնքի ոլորտային ծախսերը եւ ձեւավորելու համայնքային բյուջեն:

Եռօրյաների ընթացքում ՏԺԴ-ականները նաեւ հյուրեր ունեցան. Շիրակի մարզի երիտասարդներին այցելեցին ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ, Գյումրի քաղաքի ավագանու անդամ Լեւոն Բարսեղյանը, Ախուրյան բազմաբնակավայր համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանը, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական եւ խորհրդատվական կենտրոնի նախագահ Ղարիբ Հարությունյանը: Նրանք մասնակիցներին պատմեցին իրենց գործունեության մասին եւ պատասխանեցին երիտասարդներին հետաքրքրող հարցերին: Արմավիրի մարզի երիտասարդներն էլ հյուրընկալեցին Քասախի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Նարեկ Մկրտչյանին եւ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ Նաիրա Առաքելյանին, որոնց ուղղեցին մի շարք հարցեր:

Իսկ ամենասպասվածը ծրագրերի ներկայացումն էր, որոնք հավակնում են փոքր դրամաշնորհների: Երկու մարզերի ներկայացուցիչներն էլ մտագրոհի ժամանակ առաջարկեցին մի քանի տասնյակի հասնող գաղափարներ, որոնցից ընտրվածներն էլ դարձան դրամաշնորհային ծրագրերի առանցքը:

Իսկ դրանց վերջնական արդյունքներն այսպիսին են.

Շիրակի մարզի երիտասարդներն իրականացնելու են հետեւյալ ծրագրերը.

«Քաղաքացիական ակտիվություն Ամասիա համայնքում» ծրագիր, որի նպատակն է՝ աջակցել Ամասիա համայնքի երիտասարդներին համայնքային խնդիրների վերհանման եւ ՏԻՄ-երի հետ համագործակցությամբ դրանց լուծման գործընթացներում:

«Իրազեկ աշակերտ, գիտակից քաղաքացի» ծրագիր, որի նպատակն է՝ Շիրակի մարզի Առափի, Լուսաղբյուր եւ Գյումրու թիվ 8 միջնակարգ դպրոցների աշակերտական խորհուրդների անդամների հմտու-

էջ 5 ➔

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Սարապատ համայնք
ՆՊԱՍՏԵԼ ՏԻՄ-ԵՐ-ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ

Շատերի մոտ հարց է ծագում՝ ի՞նչ կարող է տալ այսօրինակ դպրոցը ոլորտում աշխատող մարդկանց: Այդ հարցի պատասխանը ստացա՝ ընտրվելով ու մասնակցելով ՏԺԴ դասընթացներին:

Մի քանի օրերի ընթացքում ՏԻ համակարգին տեղյակ, բազմափորձ բանախոսները մեզ փոխանցեցին ոլորտին վերաբերող շատ գիտելիքներ, ինչ էլ որ գիտեինք ՏԻՄ-երի մասին, թարմացվեց:

Շատ կարեւորում եմ, որ մեզ տրվեց հնարավորություն կազմել ծրագիր, որը պետք է պարունակեր համայնքին վերաբերող որեւէ խնդիր, որի լուծման ուղղությամբ մենք պետք է քայլեր իրականացնենք եւ հասնենք դրական արդյունքի:

Մեր խմբի ներկայացրած ծրագրի միջոցով ուզում ենք ստեղծել ու ամրապնդել ՏԻՄ-եր-հանրություն կապը՝ հիմնվելով ժողովրդավարության սկզբունքների վրա: Ուզում ենք, որ մեծանա հանրության իրազեկվածությունը ՏԻՄ-երի մասին, ձեւավորվի երկուստեք վստահություն:

ՄԱՐԳԱՐԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Առափի համայնք
ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՆՊԱՍՏԵՆՔ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Ես միշտ հետաքրքրվում եմ համայնքային կյանքով, փորձում եմ հասկանալ առկա խնդիրները, լուծման տարբերակներ մտածել: Ես կարծում եմ, որ համայնքի յուրաքանչյուր բնակիչ, առավելեւս՝ երիտասարդները, պետք է ակտիվորեն ներգրավվեն համայնքային կյանքում, փորձեն ինչ-որ կերպ նպաստել բնակավայրի զարգացմանը:

Ցավոք, այսօր կա անտարբերություն, պասիվություն, եւ նման միջոցառումները լավ առիթ են, որ երիտասարդները մասնակցեն, հմտություններ, կարողություններ ձեռք բերեն ու այդ ամենով փորձեն փոփոխություններ կատարել իրենց համայնքներում:

Ես այն համոզմանն եմ, որ ավելի հեշտ է խնդրին տեղում լուծում տալ, քան նստել ու սպասել, թե երբ մի կառույց, կազմակերպություն կփորձի աջակցել այդ խնդրի լուծմանը:

«Տեղական ժողովրդավարության դպրոցը» հիանալի առիթ է, հնարավորություն՝ ծանոթանալու ՏԻ ոլորտին գիտակ, տեղյակ մասնագետների հետ, նրանցից լսելու, սովորելու բնագավառին առնչվող տեղեկություններ, ստանալու գիտելիքներ: Եվ սա ինձ համար մեծ ձեռքբերում է, որ նման հնարավորություն ընձեռվել է ինձ ու տասնյակ այլ երիտասարդների:

Ուրախությամբ ուզում եմ արձանագրել, որ ակնկալիքներս լիովին արդարացել են, եւ այն խնդիրները, որոնք հուզում են ինձ, ներկայացված են մեր դրամաշնորհային ծրագրում:

Կարծում եմ, որ ՏԺԴ-ն պետք է անպայման շարունակական լինի, դասընթացները կարելի է կազմակերպել անգամ համայնքներում, ինչը կնպաստի առավել մեծ թվով երիտասարդների ներգրավմանը, որոնք իրենց փորձը կփոխանցեն մյուսներին:

ԼԻԼԻԹ ՓԱՆՈՍՅԱՆ,
քաղաք Էջմիածին
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՓՈԽԵԼՆ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՇԱՀ Է

Երբ իմացա ՏԺ դպրոցի մասին, անհամբերությամբ սպասում էի, թե երբ են լինելու մարզային փուլերը, եւ, հուրախություն ինձ, բազմաթիվ հայտատուներից հանձնախումբը ընտրել էր նաեւ ինձ: Անկեղծորեն ասեմ՝ չգիտեի, որ այս դպրոցը թիրախավորելու է կոնկրետ ՏԻ ոլորտը, մտածում էի, որ հիմքը միայն ժողովրդավարությունն է, բայց ստացվեց երկուսը՝ մեկում:

Սեմինարների շատ եմ մասնակցում ու հասկացել եմ, որ ոչ ֆորմալ կրթությունն ավելի շատ բան է տալիս, քան՝ ֆորմալը:

Խոստովանեմ, որ ՏԺ դպրոցը էականորեն տարբերվում է մյուս սեմինարներից, որոնց ես հաճախել եմ, որովհետեւ, նախեւառաջ, մեզ հետ աշխատող թիմը՝ աշխատակազմը, շատ լավն է, իրենց հետ հեշտ է աշխատել, այստեղ շատ են թիմային աշխատանքները, որոնք երբեմն հոգնեցնող են, բայց այդ ամենի շնորհիվ պահպանվում է ինտերակտիվությունը: Դպրոցը մեզ տվեց շատ գիտելիքներ, իսկ մտագրոհներն ու ռեֆլեքսիաները օգնեցին, որ մեր ստացած գիտելիքներն ավելի արմատավորվեն:

Ճիշտ է, այս դպրոցն ավարտողներից ոչ բոլորը կներգրավվեն համայնքային կյանքում, բայց գոնե կունենան որոշակի գիտելիքներ ՏԻ մասին, հարկ եղած դեպքում էլ կարող են կիրառել:

Ուրախությամբ եմ ուզում արձանագրել, որ համայնքային կյանքում ներգրավվածության տեսանկյունից մեր քաղաքում կա ակտիվություն, կա երիտասարդների մի խումբ, որը շատ հետաքրքրված է, բայց խումբը բոլորի ձայնը չի, որովհետեւ մեծ մասը գաղափար չունեն ՏԻ մասին, ավելին՝ շատերը նյութական շահ են փնտրում, չմտածելով, որ համայնքում ինչ-որ բան փոխելն արդեն իսկ շահ է:

ՀԱՄԼԵՏ ՍՈՒՋՅԱՆ,
քաղաք Արթիկ
ԼԱՎ ԿԼԻՆԵՐ ԴՊՐՈՑՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՆԱԵՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՄԲ

Ես ՏԻ ոլորտի ներկայացուցիչ եմ, եւ ակնկալիքներիցս մեկն ու ամենագլխավորն այն էր, որ ավելացնեի ՏԻ բնագավառի իմ գիտելիքները: Հույսերս ու ակնկալիքներս իրապես արդարացան, եւ ոլորտի մասնագետների դասախոսությունները մեզ շատ բան տվեցին: Իմացանք, թե ինչպես են կազմվում տարեկան աշխատանքային պլանները եւ բյուջեները, ձեռք բերեցինք գիտելիքներ համայնքի պլանավորման ու բյուջետավարման մասին: Ինձ շատ է հետաքրքրում համայնքների խոշորացման գործընթացը, խոշորացված համայնքներում կատարված փոփոխությունները, որոնց մասին նույնպես խոսվեց:

Կարեւոր է այն հանգամանքը, որ մեզ հնարավորություն տրվեց մեր համայնքներում առկա խնդիրները վերհանել ծրագրերի միջոցով եւ փորձել դրանց ինչ-որ չափով լուծում տալ, իհարկե, հիմքում ունենալով տեղական ժողովրդավարության ամրապնդումը:

Եվ ողջունելի է այն փաստը, որ մենք կարող ենք այստեղ ձեռք բերված գիտելիքները տարածել մեր համանքներում՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով;

Շատ լավ է, որ դպրոցն ընդգրկում է բոլոր մարզերը, եւ ակամայից նաեւ մրցակցություն է ձեւավորվում ոչ միայն նույն մարզի ներկայացուցիչներից կազմված խմբերի միջեւ, այլ նաեւ՝ այլ մարզերի:

Կուզենայի, որ դասընթացները լինեին միջմարզային, քանի որ՝ մի տնից չենք, մի հալի ենք, եւ նույն խնդիրներն առկա են գրեթե բոլոր մարզերում, եւ հետաքրքիր կլիներ իմանալ, թե այլ մարզերի երիտասարդները նույն խնդրի լուծման համար ինչ տարբերակներ կառաջարկեն:



ԱՆԻ ՄԱՆԳՈՒՇՅԱՆ,
Խանջյան համայնք
ԴՊՐՈՑՆ ԻՆՁ ՏՎԵՑ ՆԱԵՎ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Երբ դիմեցի այս դպրոց, իմ շրջապատում կային մարդիկ, որոնք թերահավատորեն էին նայում ու չէին հավատում, որ մի քանի օրերի դասընթացների ընթացքում հնարավոր է ինչ-ինչ գիտելիքներ ձեռք բերել, բայց...

Ես ունեի ՏԻ մասին որոշակի գիտելիքներ, եւ իմ նպատակն էր ավելի խորացնել դրանք, նաեւ՝ լրացնել: Այդպես էլ եղավ: Այստեղ ոչ միայն շատ գիտելիքներ ձեռք բերեցի, այլ նաեւ՝ վստահություն համայնքային կյանքին մասնակցելու, խնդիրներ ու հարցեր բարձրաձայնելու համար:

Ես շարունակելու եմ իմ ընտրած ճանապարհը՝ օգտագործելով նաեւ ՏԺԴ-ում իմ ձեռք բերածը, եւ փորձելու եմ օրինակ դառնալ մյուս երիտասարդների համար:

Ես կարծումեմ, որ ՏԺ դպրոցում սովորելու անհրաժեշտություն ունեն բոլորը՝ անկախ տարիքից ու մասնագիտությունից:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
քաղաք Գյումրի

ԻՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՄԵԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ Է

«Տեղական ժողովրդավարության դպրոց»-ին իմ մասնակցությունն արդեն իսկ համարում եմ մեծ ձեռքբերում, քանզի ոչ բոլորին էր տրված նման հնարավորություն, եւ մեծ թվով դիմողներից ընտրվել է մի քանի տասնյակը:

Ես ուսումնական պրակտիկան անցկացրել եմ համայնքապետարանում եւ քիչ թե շատ ծանոթ եմ ՏԻ ոլորտին, իսկ ՏԺ դպրոցն էլ ավելի լրացրեց, բազմապատկեց իմ գիտելիքները: Դպրոցը, որը խարսխված է ժողովրդավարության սկզբունքների վրա, մեզ տվեց ամփոփ գիտելիքներ ՏԻ մասին, իմացանք, թե որոնք են ՏԻՄ-երի հիմնական լիազորությունները, գործառույթները:

Դասընթացներից բացի, օրակարգային կետերից մեկն էլ հանդիպումն է ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ, որը նույնպես շատ կարեւորում եմ: Մենք ոչ միայն մեզ հետաքրքրող հարցերն ուղղեցինք մեր հյուրերին, որոնց նրանք սիրով պատասխանեցին, այլ նաեւ լսեցինք նրանց կարծիքը համայնքային կյանքում երիտասարդների ներգրավվածության մասին:

Կարեւորում եմ նաեւ դրամաշնորհային ծրագրերի կազմումն ու ներկայացումը, որոնց մշակման ընթացքում էլ շատ բան սովորեցինք, իմացանք, թե ինչպես պետք է կազմել, որն է խնդիրը, որը նպատակը, որը արդյունքը եւ այլն:

Լավ կլիներ, որ այս դպրոցի մասնակիցներին տրվեր հնարավորություն՝ պրակտիկա անցնել համայնքապետարաններում եւ կիրառել այստեղ ձեռքբերված գիտելիքները:



ԱԼՖՐԵԴ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ,
Սարդարապատ համայնք

ՏԻՄ-ԵՐԸ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

Ես Քաղաքացիական երիտասարդական կենտրոնի անդամ եմ Արմավիր քաղաքում, բազմաթիվ անգամներ մասնակցել եմ տարբեր դասընթացների, ճամբարների եւ ՏԻ ոլորտի մասին ինֆորմացված էի, ունեի բավական գիտելիքներ, բայց այստեղ նույնպես շատ բան սովորեցի (ասենք ծրագիր կազմելու նրբությունները):

Ես այն համոզմանն եմ, որ երիտասարդությունը պետք է ներգրավվի համայնքային կյանքում, բայց, ցավոք, չեմ տեսնում ՏԻՄ-երի ներկայացուցչի, որը եզրեր է փնտրում երիտասարդության հետ համագործակցության. երեւի չեն ուզում հավելյալ պատասխանատվություն վերցնել իրենց վրա:

Մեր մարզում երիտասարդները մասնակցում են ՏԻ գործընթացներին, պահանջատեր են, բայց բացակայում է ՏԻՄ-երի կողմից շահագրգռվածությունը, համագործակցությունը. ասենք, մասնակցում ենք հանրային քննարկումների, լսում են մեր կարծիքը, բայց հաշվի չեն առնում:

ՏԺԴ-ի իրականացման գաղափարը շատ լավն է ու տեղին, որովհետեւ երիտասարդների պասիվ մասնակցությունը պայմանավորված է նաեւ գիտելիքների պակասով, եւ դպրոցը պետք է շարունակություն ունենա, որպեսզի պարբերաբար տարբեր խմբեր ուսուցանվեն, ասեմ ավելին՝ եթե այս դպրոցն ավարտածները հերթական անգամ հնարավորություն ունենան մասնակցելու՝ հաստատ շատ նոր բան կսովորեն:

ՄԱՐՈ ՍԱՀԱԿՅԱՆ,
Մայիսյան համայնք

ՆՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՊԵՏՔ ԵՆ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Անկեղծ ասած, երբ եկա ՏԺ դպրոց, այստեղ ամեն ինչ ինձ համար անծանոթ էր՝ ՏԻ համակարգը, դասախոսությունների ընթացքում գործածվող մասնագիտական բառերը: Դասընթացների առաջին եռօրյան ինձ համար ինտեգրման ժամանակահատված էր, սակայն, հուրախություն ինձ, երկրորդ եռօրյային արդեն ամեն ինչ նորմալ ընթացավ, քանի որ արդեն ձեռք էի բերել բավականաչափ գիտելիքներ, եւ մատուցվող թեմաներն արագորեն ընկալում էի:

Ինձ մոտ կար իրազեկվածության պակաս, եւ դա նկատելի է մեր համայնքի բնակիչների կեսից ավելիի մոտ: Այդ իսկ պատճառով նրանք չեն կարողանում ճիշտ ձեւակերպել ու ներկայացնել իրենց խնդիրները, եւ դրանից ելնելով էլ կաղում է ՏԻՄ-երի աշխատանքը, քանի որ, եթե խնդիրը չես բարձրաձայնում, մտածում են, որ ամեն ինչ նորմալ է:

Այս դպրոցի անհրաժեշտությունը շատ կար, թեկուզեւ գոնե երիտասարդները տեղեկացված լինեն: Օրինակ՝ ես չգիտեի ավագանու նիստերի բաց լինելու մասին, այստեղ առաջին անգամ փորձեցի ծրագիր կազմել ու մշակել...

Կարծում եմ, որ այսպիսի դասընթացներ կարելի է կազմակերպել նաեւ համայնքապետարանների աշխատակիցների համար, որոնք հիմնականում պատրաստված չեն:

🡐 էջ 4

թյունների եւ կարողությունների զարգացման միջոցով խթանել մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

«ՏԻՄ-ը 4-ը մեկում» ծրագիր, որի նպատակն է՝ բարձրացնել Ախուրյան, Ազատան եւ Արթիկ համայնքների 16-18 տարեկան երիտասարդների տեղական ինքնակառավարման մասին իրազեկվածության մակարդակը:

«Իրազեկված եւ ինտեգրված պատանիներ» ծրագիր, որի նպատակն է՝ բարձրացնել Գյումրու ՇՊՀ ավագ դպրոցի եւ Թռչունյան տան պատանիների իրազեկվածության ու տեղական ինքնակառավարման հանդեպ հետաքրքրվածության մակարդակը:

Արմավիրի մարզի թիմերն էլ կիրագործեն հետեւյալ ծրագրերը.

«Կանա՛չ», նպատակը՝ նպաստել համայնքում էկոմշակույթի ձեւավորմանը,

«ՏԻՄ-ON», նպատակը՝ ՏԻՄ-երի հետ համագործակցության արդյունքում ակտիվացնել երիտասարդներին, կազմակերպել նրանց ժամանցը,

«Համայնքը եւ ես», նպատակը՝ Արմավիր համայնքի 16-20 տարեկան երիտասարդների ինտեգրումը համայնքային կյանքին,

«Այլընտրանքային ավագանի», նպատակը՝ երիտասարդների ներգրավում համայնքային խնդիրների լուծման գործընթացում,

«ՏԻՄ-ինֆո», նպատակը՝ համայնքում ունենալ գիտակից, ակտիվ եւ համագործակցող երիտասարդներ, որոնք կլինեն ոլորտային գիտելիքների կրողները եւ փոխանցողները:

Դասընթացների ավարտին բոլոր մասնակիցները ստացան ավարտական հավաստագրեր:

ՏԺԴ-ի հերթական կանգառները նախատեսվում են ՀՀ Տավուշի եւ Լոռու մարզերում:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

ԵՌՕՐՅԱ ՃԱՄԲԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՀՀ մարզերում շարունակվում են ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական ժողովրդավարության դպրոցի» (ՏԺԴ) դասընթացները: ՏԺԴ-ի կարեւորագույն բաղադրիչներից մեկն էլ դրամաշնորհային ծրագրերի իրականացումն է, որոնց նպատակն է վերհանել համայնքային խնդիրներ եւ առաջարկել լուծման ուղիներ՝ հիմնվելով ժողովրդավարության սկզբունքների վրա:

Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերում մեկնարկել եւ ընթացքի մեջ են մի շարք ծրագրեր, իսկ Արենի համայնքում ծրագիրն արդեն ավարտվել է:

«Եռօրյա ճամբար Արենի համայնքում». այսպես էր կոչվում Արենի համայնքում իրականացված ծրագիրը, որի նպատակն էր՝ նպաստել համայնքում միջերիտասարդական շփման ակտիվացմանը, բարձրացնել երիտասարդության շրջանում ՏԻՄ-երի մասին տեղեկացվածության մակարդակը, ինչպես նաեւ ակտիվացնել սոցիալական պատասխանատվության մակարդակը:

Եռօրյա ճամբարը, որին մասնակցում էին Արենի համայնքի 6 բնակավայրերից (Արենի, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ, Ագարակաձոր) ընտրված 23 երիտասարդ (16-34 տարեկան), անցկացվեց «Սիրանույշ» ճամբարում: Ճամբարային 3 օրերն անցան հետաքրքիր ու հագեցած գրաֆիկով. Նոր ծանոթություններ, հանդիպումներ ՏԻ ոլորտի ներկայացուցիչների հետ եւ, իհարկե, դասախոսություններ:

Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետներ Դավիթ Մարգարյանը եւ Աբրահամ Արտաշեսյանը խոսեցին ՏԻՄ-երի դերի եւ նշանակության, տեղական ժողովրդավարության, ավագանու դերի եւ բնակչության ակտիվության կարեւորության մասին, իսկ թե ինչ է համայնքի բյուջեն, մանրամասնեց փորձագետ Կարեն Հովհաննեսյանը:

Երիտասարդները հանդիպեցին նաեւ Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանին եւ ավագանու անդամ Մ. Սիմոնյանին: Հանդիպման ընթացքում բարձաձայնվեցին մի շարք հարցեր, եղան նաեւ առաջարկներ, որոնք քննարկվեցին անմիջական մթնոլորտում, ընդունվեցին համայնքի ղեկավարի կողմից: Ի թիվս այլ հարցերի՝ քննարկումների ընթացքում խոսվեց համայնքային երիտասարդական կենտրոն ունենալու, եւ հատկապես, այդ կենտրոնի համար տարածք ունենալու անհրաժեշտության մասին: Համայնքի ղեկավարը անմիջապես արձագանքեց այս խնդրին, եւ ձեռք բերվեց պայմանավորվածություն Արենի գյուղի նախկին համայնքապետարանի շենքում երիտասարդներին հատկացնել արդեն իսկ վերանորոգված սենյակը, իսկ կահավորման հարցը, ըստ համայնքի ղեկավարի, հնարավորինս արագ լուծում կստանա:

Համայնքի ղեկավարի հետ հանդիպմանը հաջորդեց բանախոսների կողմից առաջադրած թիմային աշխատանքը, որն էլ անցավ թեժ քննարկումների մթնոլորտում:

Արենի համայնքում իրականացված եռօրյա ճամբարում որպես կարեւորագույն արդյունքներ գրանցվեցին 28 երիտասարդների ակտիվ շփումը եւ համայնքային խնդիրների շուրջ համագործակցությունը, ՏԻՄ-երի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը, սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացումը:

Համայնքի ղեկավար Հ. Սահակյանի հետ երիտասարդները պայմանավորվածություն ձեռք բերեցին, համաձայն որի՝ համայնքապետարանը միջոցներ կտրամադրի Ելփին բնակավայրում ծառատունկ իրականացնելու համար: Խաչիկ բնակավայրի համար էլ կգործի Երեւան-Խաչիկ երթուղային տրանսպորտը:

Արենի համայնքում իրականացված եռօրյա ճամբարի շրջանակներում պարզ դարձավ, որ նմանօրինակ ճամբարները եւ ծրագրերն անհրաժեշտություն են հանրապետության կենտրոնից հեռու գտնվող յուրաքանչյուր համայնքի եւ բնակավայրի համար եւ ցանկալի է, որ նմանատիպ ծրագրերը գյուղաբնակ վայրերում դառնան շարունակական՝ ընդգրկելով ավելի մեծ թվով երիտասարդների:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ

2019թ. սեպտեմբերին ավարտվեց ՀԱՄԱՏԵՂ ծրագրի հինգերորդ տարին: Այս ամբողջ ժամանակահատվածը կարելի է բնութագրել որպես ակտիվ, ծավալուն եւ արդյունավետ աշխատանքի շրջան: ՀԱՄԱՏԵՂ ծրագիրը կյանքի էր կոչվել քաղաքացիների ակտիվ ներգրավման եւ մասնակցության միջոցով խթանելու համայնքների զարգացումը: Այս տարիների ընթացքում 6 կազմակերպություններից բաղկացած ՀԱՄԱՏԵՂ համընկերությունը աշխատել է բոլոր այն ուղղություններով, որոնք անհրաժեշտ էին տեղական ինքնակառավարման ոլորտի մասին հանրությանը իրազեկելու համար՝ օրենսդրական կարգավորումներից սկսած մինչեւ խորհրդատվության տրամադրում եւ մասնակցային գործընթացների խթանում: ՀԱՄԱՏԵՂ ծրագրի թիմը քաղաքացիներին իրազեկել է օրենսդրական դաշտի եւ դրա ընձեռած հնարավորությունների մասին, աջակցել է քաղաքացիներին տեղական նախաձեռնությունների կազմակերպման գործում, իրականացրել ՏԻՄ-երի աշխատանքի մշտադիտարկում, թիրախ համայնքների բնակիչներին իրազեկել մասնակցային մեխանիզմների մասին, աշխատել է ՏԻ ոլորտում քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակման վրա եւ ներկայացրել դրանք կառավարությանը, օգնել է համայնքապետարաններին վարել իրենց կայքերը, եւ այս ամբողջ գործընթացը լուսաբանվել է մամուլում: Թվարկված գործողությունները Համայնքների ֆինանսիստների միավորման, Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն ՀԿ-ի (ՏՀԶՎԿ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի, Երեւանի մամուլի ակումբի, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան»-ի (ՀՌԿԿ), եւ իհարկե, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) կողմից իրականացված բազմակողմանի աշխատանքի ոչ ամբողջական ցանկն է:

ՀԱՄԱՏԵՂ ծրագրի շրջանակում ԵՀՀ-ի գործունեությունը կարելի է բնութագրել 2 ուղղությամբ՝ աջակցություն մասնակցային համայնքային նախաձեռնություններին եւ հետազոտական ու ուսուցողական նյութերի մշակում եւ հաղորդակցում: Այս ուղղությունների շրջանակներում ԵՀՀ-ն ակտիվորեն օգտագործեց իր ԻՆՖՈՏՏ-ների ցանցը, համայնքների խոշորացման վերաբերյալ բնակիչների կարծիքի հարցում իրականացրեց, պատրաստեց տեղական ինքնակառավարման վերաբերյալ անիմացիոն մուլտֆիլմեր, օգտագործեց կրեատիվ խաղերի մեթոդաբանությունը ՏԻ ոլորտի համար ռազմավարական առաջարկություններ մշակելու համար, եւ վերջապես ուսումնասիրեց տեղական ինքնակառավարման մարմինների եւ քաղաքացիական հասարակության համագործակցության միջազգային փորձը եւ ներկայացրեց ուսումնասիրության արդյունքները համայնքներում:

ԻՆՖՈՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համայնքային կյանքին բնակիչների մասնակցությունը խթանելու նպատակով ԵՀՀ-ն ակտիվորեն օգտագործում է ԻՆՖՈՏՆԵՐԻ ցանցը, որը տեղեկատվության տարածման եւ համայնքային նախաձեռնություններին աջակցելու համար ստեղծված, բնակիչների համար դասընթացներ եւ դասախոսություններ կազմակերպող մարզային ՀԿ-ների ցանց է: ԻՆՖՈՏՆԵՐԻ թիրախում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ մեդիագրագիտություն, քննադատական մտածողություն, տեղական ինքնակառավարում, մարդու իրավունքներ, սոցիալական ոլորտի բարեփոխումներ եւ այլն: Նախքան ՀԱՄԱՏԵՂ ծրագրի մեկնարկը ԻՆՖՈՏՆԵՐԸ գործում էին ՀՀ վեց մարզերում՝ Շիրակ, Լոռի, Արմավիր, Գեղարքունիք, Սյունիք եւ Տավուշ, այնտեղ գործող եւ քաղաքացիների վստահությունը վայելող ՀԿ-ներին կից: ՀԱՄԱՏԵՂ ծրագրի շրջանակում 2016թ. ԻՆՖՈՏՆԱՅԻՆ ցանցը համալրվեց եւս երկու ԻՆՖՈՏՆԵՐՈՎ՝ Արարատ եւ Վայք: ԻՆՖՈՏՆԱՅԻՆ գործունեությունը ՀՀ ամբողջ տարածքում ապահովելու նպատակով 2019-ի աշնանը նոր ԻՆՖՈՏՆԵՐ են բացվել վերջին երկու մարզերում եւս՝ Կոտայքում եւ Արագածոտնում:

ԻՆՖՈՏՆԵՐԸ մոբիլիզացնում են համայնքային կարեւորագույն ռեսուրսները, այն է՝ մարդու միտքը եւ կարողությունը եւ հիմնականում թիրախավորում են երիտասարդներին, նպատակ հետապնդելով իրազեկ եւ պատրաստված քաղաքացիներ ձեւավորել համայնքում ակտիվ գործունեություն ծավալելու նպատակով:

Ծրագրի իրականացման ընթացքում երիտասարդների ջանքերով լուծվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ Գյումրու Մուշ 2 թաղամասում կարգավորվեց հանրային տրանսպորտի հարցը: Այս պահին Գյումրի ԻՆՖՈՏՆԵՐԸ ջանքեր է գործադրում ճանապարհների վրա հեծանվային գծանշումներ ավելացնելու եւ հեծանվային երթեւեկության մշակույթը զարգացնելու ուղղությամբ: Արարատ համայնքում ԻՆՖՈՏՆԵՐԻ շարունակական ջանքերի շնորհիվ համայնքապետարանն ի վերջո կառուցեց միջհամայնքային երթուղու համար նախատեսված կանգառը: Արմավիր ԻՆՖՈՏՆԵՐԸ, ձեռնամուխ լինելով համայնքի մշակութային կյանքը զարգացնելու գործին, ակտիվորեն աջակցում է Արմավիրի մշակութային հաստատություններին, իսկ Մարտունի ԻՆՖՈՏՆԵՐԸ փորձում է վերահմաստավորել քաղաքի ճարտարապետությունը՝ օգտագործելով լիճը որպես համայնքի զարգացման կարեւոր ռեսուրս: Սյունիք ԻՆՖՈՏՆԵՐԸ վիզուալիզացնում է համայնքային բյուջեները՝ դարձնելով դրանք հանրամատչելի եւ հետաքրքիր: Իջեւան ԻՆՖՈՏՆԵՐԻ ջանքերի շնորհիվ հասցեագրվեց տարիներ շարունակ աղտոտված Աղստեւ գետի հարցը: Վանաձոր ԻՆՖՈՏՆԵՐԸ սկսել է Լոռի Բերդ խոշորացված համայնքում երիտասարդական կենտրոնի կառուցման նպատակով քրաուդֆանդինգը, եւ այլն:

ԻՆՖՈՏՆԵՐԻ դերը մեծ է նաեւ ՀԱՄԱՏԵՂ ծրագրի մեկ այլ բաղադրիչի՝ Մարդամեջ սոցիալ նորարարության հավաքների կազմակերպման ու ծրագրերի իրականացման գործում: ՏԻՄպուլս ծրագիրը, որը կյանքի էր կոչվել 2017 թվականից, մեծ ազդեցություն ունեցավ Մարտունի ԻՆՖՈՏՆԵՐԻ, համայնքի երեխաների եւ ՏԻՄ-ի միջեւ կապի հաստատման համար: ՏԻՄպուլսի նպատակն էր երիտասարդական խմբերով աշխատել ավագանու անդամների հետ եւ բարձրաձայնել կարեւոր համայնքային խնդիրներ եւ լուծում տալ դրանց:

Իսկ ինչպե՞ս են այս գործողությունները կյանքի կոչվում: ԵՀՀ ծրագրային թիմը ամեն տարի իրականացնում է գործողությունների պլանավորում յուրաքանչյուր ԻՆՖՈՏՆԵՐԻ համար առանձին: Այցելության ընթացքում ԵՀՀ թիմը ԻՆՖՈՏՆԵՐԻ համակարգողների հետ միասին քննարկում եւ ամփոփում է նախորդ տարին, հաջողված գործողությունները, այն պատճառները, որոնք խոչընդոտել են որոշ գործողությունների ընթացքին: Գործողությունները պլանավորելիս հաշվի են առնվում տվյալ ԻՆՖՈՏՆԵՐԻ պրոֆիլը եւ տվյալ մարզին կամ համայնքին բնորոշ խնդիրներն ու համայնքային իրադարձությունները:

Վերջին շրջանում էլեկտրոնային հաղորդակցությունը սկսել է իր կարեւոր տեղը զբաղեցնել նաեւ ՏԻ ոլորտում: Համայնքապետարանների կայքերն ու ֆեյսբուքյան էջերը դարձել են տեղեկատվության տարածման կարեւոր գործիքներ: ՀԱՄԱՏԵՂ ծրագրի անդամ ՏՀԶՎԿ-ն ապահովում է բազմաթիվ համայնքների կայքերի աշխատանքը, իսկ կայքերի աշխատանքի մշտադիտարկման մեջ իրենց դերն ունեն նաեւ ԻՆՖՈՏՆԵՐԸ: Նրանք ամեն ամիս ստուգաթերթի հիման վրա իրականացնում են կայքի համապատասխան բաժինների գնահատում՝ պարզելու համար, թե ինչքանով է տեղադրվում ինֆորմացիան համապատասխան բաժնում: Հավաքագրված տվյալները համապատասխան համայնքապետարանների հետ հաղորդակցելու նպատակով ԻՆՖՈՏՆԵՐԸ կազմակերպում են թիրախ համայնքների կայքերի վերլուծությանը նվիրված միջոցառումներ, որոնց մասնակցում են աշխատակիցներ տվյալ համայնքապետարաններից, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ եւ ակտիվ բնակիչներ: Հավաքագրված դիտարկումները ներկայացվում են մասնակիցներին՝ կայքերի աշխատանքը բարելավելու եւ թերությունները շտկելու նպատակով:

ԵՀՀ-ն մշտապես խորհրդատվություն է տրամադրում ԻՆՖՈՏՆԵՐԻՆ, հետեւում նրանց աշխատանքին, աջակցում եւ վարում միջոցառումները, օգնում վերլուծել ստացված նյութերը: Այս ամենն, իհարկե, հնարավոր է դառնում ՀՖՄ, ՏՀԶՎԿ, ԵՄԱ եւ ԱԺԱ փորձագիտական թիմի ակտիվ ներգրավմամբ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿ՝ YOUTHBANK

ԵՀՀ-ն մշտապես կարեւորել է երիտասարդների դերը համայնքային նախաձեռնություններում, խրախուսել նրանց առաջնորդության հմտություններն ու իշխանավորումը: Այդ նպատակով ԵՀՀ-ն օգտագործում է իռլանդական Երիտասարդական բանկերի մոդելը, որը իշխանավորում է երիտասարդներին համայնքային նախաձեռնություններ հեղինակելու եւ իրականացնելու գործում: ՀՀ 9 մարզերի շուրջ 40 երիտասարդներ ընտրվեցին Երիտասարդական բանկերի կոմիտեի անդամներ: Կոմիտեի անդամները իրենց հերթին, հայտարարելով գաղափարների հավաքագրման մրցույթների մասին, ընտրում էին այնպիսի ծրագրային առաջարկներ, որոնք հնարավոր է կյանքի կոչել փոքր դրամական աջակցության սահմաններում: ԵԲ կոմիտեի անդամները ոչ միայն ընտրում էին գաղափարները, այլ նաեւ աջակցում թիմին իրագործելու դրանք: Երիտասարդական բանկերը համագործակցել են ՏԻՄ-երի հետ՝ արդյունքում համոզելով նրանց համաֆինանսավորել այդ փոքր գաղափարները: Նման հաջողված պատմություններ են գրանցվել Մարտունու, Արարատի, Գորիսի, Աշտարակի ԵԲ-ի գործունեության ընթացքում: Ֆինանսավորվել են այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են կանգառի տեղադրումը Շիրակի Կրաշեն համայնքում, մարզասարքերի տեղադրումը Գյումրու հանրային տարածքում՝ այգում, Մարտունիում ԵԲ-ի եւ ՏԻՄ- ի համաֆինանսավորմամբ գնվել են սպորտային սարքեր դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի համար, Դիլիջանում գնվել եւ այգում տեղադրվել է ձեռքի ուժի սեղան՝ խթանելու սպորտի զարգացումը:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՒ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Այս գործընթացը սկսվել էր դեռեւս 2016թ., երբ մեկնարկեց համայնքների խոշորացման գործընթացը: Խոշորացման նպատակն էր միավորել մի քանի փոքր համայնքների ռեսուրսները եւ կրճատել վարչական ծախսերը, քանի որ բազմաթիվ փոքր համայնքներում ամբողջ բյուջեն բավականացնում էր միայն համայնքապետարանի աշխատակիցների աշխատավարձերը վճարելուն: Այդ պարագայում խոսել համայնքների զարգացումից կամ ինչ-որ խնդիրների լուծումից, իհարկե, անիմաստ էր:

Սակայն խոշորացման գաղափարը իր հետ բերեց դժգոհության մեծ ալիք. բնակիչները չէին ցանկանում միավորվել այլ համայնքների հետ մի շարք պատճառներով՝ աշխատատեղերի կրճատում, ներկայացուցչի պակաս ավագանու անդամների կազմում, միջհամայնքային ճանապարհների վատ վիճակ եւ այլն: Սակայն գլխավոր պատճառներից մեկը գործընթացի մասին իրազեկվածության պակասն էր, ինչպես նաեւ գործընթացն իրականացնողների հանդեպ վստահության պակասը: Կառավարությունը նաեւ բավարար ջանք չէր գործադրում բնակիչների սպասելիքներն ու ընկալումները հավաքագրելու եւ խոշորացման պլանավորման ընթացքում հաշվի առնելու գործում: Դա հատկապես ակնառու էր խոշորացման երրորդ ալիքի ժամանակ:

Ստեղծված իրավիճակը հասցեագրելու նպատակով ԵՀՀ-ն ՀՖՄ-ի, ՀՌԿԿ-ի, ԻՆՖՈՏՆԵՐԻ եւ մարզային ՀԿ-ների հետ միասին նախաձեռնեց այլընտրանքային մի նախագիծ, որի նպատակն

էջ 7 ➔

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

🡐 էջ 6

էր, հաշվի առնելով շահագրգիռ բոլոր կողմերի կարծիքը՝ ՏԻՄ, բնակչություն, փորձագետներ, ստանալ համայնքների փնջերի մի քանի հնարավոր եւ իրատեսական տարբերակներ: Կազմվեցին հարցաշարեր, որոնք ներառում էին տեղեկություն համայնքների ենթակառուցվածքների՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, խմբակներ, ճանապարհների առկայություն, սահմանակից համայնքներ, եւ այլնի մասին: Կազմվեցին նաեւ համայնքների փնջերի ձեւավորման հավանական տարբերակներ, որոնք պետք է քննարկվեին բնակչության եւ ՏԻՄ-երի հետ: ԻնֆոՏները իրականացրեցին հեռախոսային հարցումներ ՏԻՄ-երի հետ, հասկանալու նրանց կարծիքը, թե ինչպես պետք է ձեւավորվեն փնջերը: Իսկ երկրորդ փուլը նախատեսված էր բնակիչների կարծիքի հետազոտությանը: Նախօրոք կազմված հարցաշարերի հիման վրա թաուն հոլ (townhall) ձեւաչափով միջոցառմանը բնակիչներն իրենց կարծիքն էին հայտնում խոշորացման մասին: Միջոցառումից հետո ստացված ամբողջ նյութը վերլուծվեց եւ մշակված հաշվետվությունը ներկայացվեց ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացան նախարարություն:

Անիմացիոն մուլտֆիլմեր

ԵՀՀ գործունեության առանցքային բաղադրիչներից է հանրային լայն իրազեկման բլոկը: Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական արժեքների տեսանկյունից ներկայացնելու եւ շահառուներին իրազեկելու նպատակով սկիզբ դրվեց անիմացիոն մուլտֆիլմերի շարքի ստեղծմանը: Հանրային իրազեկման նպատակով որպես գործիքներ ստեղծվում եւ օգտագործվում են հանրության համար հետաքրքիր նյութեր, որոնց նպատակը օրենքներում, կառավարության որոշումներում, կարգերում եւ այլ պաշտոնական փաստաթղթերում ամրագրված տեղեկատվությունը հանրամատչելի դարձնելն ու տարածելն է: Այս բաղադրիչի շրջանակներում պատրաստված «Մարդու տեղը» խորագրով անիմացիոն հոլովակների շարքը թույլ է տալիս հետաքրքիր, պատկերավոր եւ մատչելի կերպով քաղաքացիներին ներկայացնել տեղական ինքնակառավարման կառուցվածքի, գործառույթների, ծառայությունների եւ գործիքների վերաբերյալ հետաքրքիր մանրամասներ: Հոլովակներն ակտիվորեն օգտագործվում են ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում կազմակերպվող հանրային իրազեկման միջոցառումների, դասընթացների եւ սեմինարների ընթացքում, ինչպես նաեւ տարածվում են ծրագրի բազմաթիվ ցանցերի միջոցով:

Հետազոտություններ

Հետազոտական բլոկի պրոդուկտներից կարելի է առանձնացնել «Տեղական ինքնակառավարման մարմինների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության հեռանկարները. միջազգային փորձը եւ դրա տեղայնացման հնարավորությունները Հայաստանում» թեմայով որակական հետազոտությունը: Հարկ է նշել թեմայի կարեւորությունը, քանի որ ՏԻՄ-ՔՀ համագործակցությունը համայնքային զարգացման ամենակարեւոր, սակայն թերագնահատված ռեսուրսներից է: ՏԻՄ-երը ունեն սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ, սակայն համայնքների զարգացման գործում կարեւոր է մշտապես հաշվի առնել նաեւ մարդկային ռեսուրսները, որոնք կարող են դրսեւորվել խորհրդատվության, կամավորության, խնդիրների լուծման նորարարական տարբերակների առաջարկի միջոցով: Այս առումով՝ հետազոտությունը շոշափում է ՏԻՄ-ՔՀ համագործակցության մի շարք հնարավոր տարբերակներ: Մասնավորապես, համայնքային պարտականությունների կամ լիազորությունների պատվիրակում, ՏԻՄ-երի եւ տեղական ՀԿ-ների կողմից համայնքային որեւէ նախաձեռնության ֆինանսավորում, ՏԻՄ բյուջեից դրամաշնորհների տրամադրում բնակիչներին, կամավորության ինստիտուտի ներդրում ՏԻՄ-երում:

Կրեատիվ խաղ

ԵՀՀ բաղադրիչներից մյուսը կրեատիվ կամ կազմակերպագործունեական խաղերի միջոցով ՏԻ ոլորտում հանրային մասնակցության վերաբերյալ ռազմավարական առաջարկությունների մշակումն է:

Ծրագրի շրջանակներում ԵՀՀ-ն կազմակերպեց երկու նման միջոցառում, յուրաքանչյուրում ներգրավելով շուրջ վաթսուն մասնակից, որոնք ներկայացնում էին տեղական եւ կենտրոնական իշխանությունները, փորձագիտական շրջանակները եւ զանգվածային լրատվամիջոցները:

Միջոցառումների արդյունքում ԵՀՀ-ն մշակեց եւ գործընկերներին ներկայացրեց վերլուծությունից եւ ռազմավարական առաջարկություններից բաղկացած մի փաստաթուղթ, որի արդյունքները օգտագործվեցին թե՛ ծրագրի շրջանակներում եւ թե՛ դրանից դուրս:

ՏԱԹԵՎԻԿ ՓԱՓԱՋՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԸ՝ ԻՆՖՈՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մինչ ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում շարունակում են իրականացվել Տեղական ժողովրդավարության դպրոցի մարզային փուլերը, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետների հետ ս.թ.նոյեմբերի 8-9-ը ԵՀՀ գրասենյակում կազմակերպել էր Տեղական ժողովրդավարության դպրոց (ՏԺԴ) ԻնֆոՏների համակարգողների համար:

Իհարկե, այս ՏԺԴ-ն իր ձեւաչափով մի փոքր տարբերվում էր մնացած դպրոցներից, քանի որ ԻնֆոՏները համայնքներում աշխատում են նաեւ ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում եւ մշտապես առնչվում են տեղական ինքնակառավարման թեմային, ԻնֆոՏների համակարգողները բավականաչափ տեղեկացված են տեղական ինքնակառավարման եւ տեղական ժողովրդավարության մասին: Այս ամենը հաշվի առնելով՝ համընկերության աշխատակիցները միջոցառման օրակարգի վերջնականացման գործընթացին մասնակից դարձրին նաեւ համակարգողներին՝ նախապես ճշտելով նրանց՝ ոլորտին վերաբերվող կարիքներն ու բացերը:

Հարցման արդյունքում պարզվեց, որ բոլոր համակարգողները կարիք ունեն մանրամասն գիտելիքներ ստանալու համայնքային բյուջեն կարդալու, այն մշտադիտարկելու եւ բնակիչների համար վիզուալիզացնելու վերաբերյալ: Հետեւաբար, երկօրյա դասընթացի առաջին օրն ամբողջությամբ նվիրվեց համայնքային բյուջեին. ՀՖՄ նախագահ Վահան Մովսիսյանը օրվա սկզբում մասնակիցներին մանրամասն բացատրեց, թե ինչպես է գոյանում համայնքային բյուջեն, ինչ բաժիններից է այն կազմված, եւ ինչպես է կազմվում համայնքի տարեկան բյուջեն: Այնուհետեւ ՀՖՄ փորձագետներ Հասմիկ Գրիգորյանը եւ Աննա Ղորուխչյանը ԻնֆոՏան համակարգողներին պատմեցին, թե ինչպես կարելի է մշտադիտարկել համայնքային բյուջեն, ցույց տվեցին բյուջեի վիզուալիզացիայի արդեն գոյություն ունեցող ձեւաչափը եւ այն կազմելու ձեւը: Իսկ օրվա վերջում ԵՀՀ աշխատակից Մելինե Ավագյանը ներկայացրեց մասնակցային բյուջետավորման հնարավոր սցենար Փարաքար համայնքի օրինակով:

Միջոցառման երկրորդ օրը նվիրված էր ԻնֆոՏների առկա առաջնահերթությունների բացահայտմանը, նրանց առջեւ դրված խնդիրների լուծման հնարավոր տարբերակների քննարկմանը, ինչպես նաեւ ՏԻ ոլորտում նոր հնարավոր նախաձեռնությունների ու գործողությունների սահմանմանը: Կատարված կարիքների գնահատման եւ միջոցառման առաջին օրը ստացված գիտելիքների հիման վրա ԻնֆոՏների համակարգողները կազմեցին ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում գործողությունների պլանավորման ալգորիթմ, որն իրենից ենթադրում է շարունակական, աստիճանական գործողությունների մի շղթա: Իսկ այդ շղթայի մասերը հետեւյալն են՝

1. Մոնիտորինգ, հետազոտություն, կարիքների գնահատում (օբյեկտիվ տվյալների հավաքագրում, որպես ծրագրի առաջին փուլ)

2. Թիրախ խմբերի/շահառուների հետ համատեղ իրականացվող գործողություններ (կրթական միջոցառումներ, նախաձեռնություններ, ռեսուրսների հավաքագրում, հանրային իրազեկում, հայեցակարգերի ձեւակերպում եւ այլն)

3. Միջավայրի փոփոխություն (ջատագովություն օրենսդրության, քաղաքականության փոփոխության համար)

4. Հանրային իրազեկում հաղորդակցական իմաստով, այսինքն՝ ծրագրային արդյունքներն ու հաջողությունները հասցեագրելու համար:

Այսինքն, ԻնֆոՏների ցանկացած նախաձեռնություն պետք է կազմված լինի 4 տեսակի գործողությունների շարքից: Գործողությունները փոփոխվում են, երբ փոփոխվում են շահառուների շրջանակները, կամ դրանք իրականացվում են մի քանի շրջանակի համար:

Շուտով յուրաքանչյուր ԻնֆոՏան համակարգող վերը նշված գործողությունների ալգորիթմի հիման վրա իր համայնքի համար առաջնային թեմաների շուրջ գործողությունների պլանը հաստատման կուղարկի ԵՀՀ, որպեսզի ՀամաՏեղ ծրագրի իրականացման վեցերորդ տարում անցնի դրանց ակտիվ իրագործմանը: Իսկ թե որոնք են լինելու այդ գործողությունները, կիմանաք՝ հետեւելով ԻնֆոՏների ֆեյսբուքյան էջերին եւ բլոգներին, ինչպես նաեւ celog.am պորտալին:

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԻՄ-ԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑԸ

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի շրջանակներում Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) 2016 թվականից սկսած իրականացնում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) կողմից օրենսդրությամբ սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մշտադիտարկում: Արդյունքների մասին ԺԱԱ-ն պարբերաբար իրազեկում է հանրությանը եւ համայնքներին՝ մարզային համաժողովների ձեւաչափով եւ անվանական նամակագրությամբ:

Մոնիտորինգի նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ՏԻՄ-երի թափանցիկության, հաշվետվողականության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մակարդակի եւ որակի բարձրացումը:

Սեպտեմբեր ամսին կազմակերպությունը ներկայացրեց հերթական մոնիտորինգի տարեկան զեկույցը:

Ողջունելով ներկաներին՝ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փոխնախագահ Աբրահամ Արտաշեսյանը նշեց, որ ՀԱՄԱՏԵՂ ծրագրի նպատակն է բարձրացնել հանրային ներգրավվածությունն ապակենտրոնացման եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացում, քաղաքացիներին տրամադրել վստահելի տեղեկատվություն, հզորացնել քաղաքացիական հասարակությունը՝ արդյունավետ, հաշվետու եւ մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու համար: Այս նպատակով կիրառվել են մի շարք գործիքներ, որոնցից մեկն էլ ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության մոնիտորինգն է: ՀՖՄ փոխնախագահն արժեւորեց 4 տարիների ընթացքում կատարված հետեւողական աշխատանքը եւ հավելեց. «Այս զեկույցն արժեքավոր է ոչ միայն մեր ծրագրի համար, որը խթանում է հանրային մասնակցությունը, այլ նաեւ ՏԻՄ-երի համար լրացուցիչ ցուցիչ է, թե ինչպես են իրենք աշխատում, եւ որոնք են այն կողմերը, որոնք բարելավելու անհրաժեշտություն ունեն»:

Մոնիտորինգի տարեկան զեկույցին մանրամասնորեն անդրադարձավ ԺԱԱ խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը: Վերջինս տեղեկացրեց, որ մոնիտորինգային ուսումնասիրման թիրախ են ընտրվել Հայաստանի բոլոր 502 համայնքները եւ դրանց ՏԻՄ-երը, որոնք գործել են 2019թ. փետրվարի 28-ի դրությամբ, եւ այս զեկույցը լրացվել է մեկ բաժնով. առանձին ամփոփում է իրականացվել խոշորացված համայնքներում՝ տեսնելու, թե վիճակագրությունը որքանով է տարբերվում մյուս համայնքներից:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը նույնն է թողնվել, եւ 2019թ. մշտադիտարկման մեկնարկին տեղեկությունների հարցումներ են ուղարկվել ՀՀ բոլոր համայնքապետերին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային հարցումներ սահմանված չեն, այս մշտադիտարկման ընթացքում, ինչպես նախորդ 15 տարիների ընթացքում, տեղեկության հարցումները համայնքապետերին հղվել են թղթային նամակով: Մոնիտորինգային թիմը մի շարք համայնքների կրկնակի հարցում է ուղարկել:

Լ. Բարսեղյանը նշեց, որ ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես ստացվել են մի շարք հետաքրքիր պատասխաններ: Մի քանի համայնքապետեր, տեսնելով իրենց հասցեագրված ծանուցագրով նամակը, հրաժարվել են այն ստանալ. Գեղարքունիքի մարզի Ակունք համայնք ուղարկված ծրարի վրա գրված է եղել՝ «չի աշխատում», իսկ Արարատի մարզի Ավշար համայնքից հետ վերադարձված ծրարի վրա էլ գրված է եղել՝ «չպահանջված», Լոռու մարզի Շենավան համայնքից վերադարձվածի վրա նշված է եղել՝ «համայնքապետը մահացած է»...

Անդրադառնալով ստացված պատասխանների հիման վրա արված վերլուծության ընդհանուր պատկերին՝ ԺԱԱ խորհրդի նախագահը տեղեկացրեց, որ ըստ որակական եւ քանակական ցուցանիշների՝ արձանագրվել է հետեւյալ պատկերը. 502 համայնքներից, ներառյալ Երեւանը, հարցումներին պատասխանել է 226-ը (45,02%): 2018թ. մոնիտորինգի ընթացքում այդ ցուցանիշը 46,22% էր, 2017-ին՝ 27,1% էր, իսկ 2016 թվականին՝ 36,5%:

Համեմատելով 2016, 2017, 2018 թվականներին իրականացված համանման մոնիտորինգների արդյունքները, 2019 թվականին արձանագրվել է տեղեկության հարցումներին համայնքների ղեկավարների արձագանքի ծավալի պայմանական կայունացում: Մասնավորաբար, 2016թ. համայնքապետերի 63,5%-ն էր անպատասխան թողել համանման մշտադիտարկման շրջանակներում հղված հարցումները, 2017թ.՝ 72,89%-ը, 2018թ.՝ 53,78%-ը, իսկ 2019թ. այդ ցուցանիշը փոքր ինչ աճել է եւ դարձել 54,98%:

Լ. Բարսեղյանն անդրադարձավ նաեւ գրավոր հարցումների պատասխանների ժամանակային վիճակագրությանը:

Աղյուսակ 2



Համայնքների ղեկավարներին հղված հարցերից մեկն էլ վերաբերում է ՏԻՄ-երի կողմից հանրային քննարկումների կամ լսումների կազմակերպմանը եւ անցկացմանը: Մշտադիտարկման շրջանակներում Հայաստանի բոլոր 502 համայնքների ղեկավարներից հղված հարցումներին պատասխանել է 216-ը, որոնցից միայն 138-ն է պատասխանել հանրային քննարկումների կամ լսումների մասին հինգ հարցերին:

Աղյուսակ 3



Ամփոփելով 2018 թվականի ընթացքում համայնքներում անցկացված հանրային լսումների մասին համայնքների ղեկավարների տրամադրած տեղեկությունները, ակնհայտ է դառնում, որ դրանց մասով սեփական լիազորությունները եւ պարտականությունները Հայաստանի համայնքապետերի զգալի մասը թերակատարում է:

Համեմատած 2017թ. եւ 2018թ. մշտադիտարկումների ժամանակ արձանագրված ցուցանիշների հետ, 2019 թվականին որոշակի աճ է արձանագրվել հանրային քննարկումների մասին համայնքապետերի պատասխանների ծավալներում: Մասնավորաբար համայնքային հանրային լսումների մասին հարցերին 2017թ. պատասխանել էր բոլոր համայնքապետերի 15,8%-ը, կամ հարցումներին ընդհանրապես պատասխանած համայնքապետերի 58,1%-ը: 2018թ. մշտադիտարկման ժամանակ այդ ցուցանիշներն աճել էին, դառնալով համապատասխանաբար՝ 26,9% եւ 58,2%: Իսկ 2019թ. մշտադիտարկման արդյունքներով այդ ցուցանիշներն էլ ավելի են աճել՝ դառնալով 28,08% եւ 62,38%:

Մշտադիտարկման թիրախ է հանդիսացել նաեւ ՏԻՄ-երի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ տրամադրումը հանրությանը. ինչպե՞ս, ի՞նչ ծավալով է դա արվում: Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաեւ ավագանու գործունեության պայմանները, մասնավորաբար, ավագանու նստավայրի առկայությունը, նիստերի եւ հանրային քննարկումների անցկացման մասին իրազեկման ցուցանակների առկայությունը համայնքում, նիստերի անցկացման սրահում կամ դահլիճում քաղաքացիների մասնակցության համար անհրաժեշտ աթոռների առկայությունը եւ քանակը:

Ամփոփելով դիտարկման արդյունքները՝ Լ. Բարսեղյանը նշեց մի քանի խնդիրներ եւ ներկայացրեց առաջարկություններ դրանց կարգավորման համար:

Զեկույցի ներկայացման ավարտին քննարկման մասնակիցները հնչեցրին մի շարք տեսակետներ, որոնք հաշվի կառնվեն հեղինակների կողմից՝ զեկույցը լրամշակելիս եւ հրապարակելիս:

ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ

Աղյուսակ 1

	Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնքների թիվը	Ընդամենը ստացված պատասխանները		Գրավոր եւ էլեկտրոնային պատասխանների թիվը եւ որակը 26.09.2019թ-ի դրությամբ				Անպատասխան հարցումների թիվը	
			հատ	%%	լիարժեք	%%	թերի	%%	հատ	%%
1	Արագածոտն	72	12	16.67%	1	1.39%	11	15.28%	60	83.33%
2	Արարատ	95	21	22.11%	2	2.11%	19	20.00%	74	77.89%
3	Արմավիր	97	30	30.93%	1	1.03%	29	29.90%	67	69.07%
4	Գեղարքունիք	57	27	47.37%	5	8.77%	22	38.60%	30	52.63%
5	Լոռի	56	52	92.86%	6	10.71%	46	82.14%	4	7.14%
6	Կոտայք	42	25	59.52%	4	9.52%	21	50.00%	17	40.48%
7	Շիրակ	42	30	71.43%	1	2.38%	29	69.05%	12	28.57%
8	Սյունիք	8	7	87.50%	3	37.50%	4	50.00%	1	12.50%
9	Վայոց Ձոր	8	6	75.00%	0	0.00%	6	75.00%	2	25.00%
10	Տավուշ	24	15	62.50%	0	0.00%	15	62.50%	9	37.50%
11	Երեւան	1	1	100.00%	1	100.00%	0	0.00%	0	0.00%
	Ընդամենը	**502**	**226**	45.02%	**24**	4.78%	**202**	40.24%	**276**	54.98%

«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթ
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրանցման վկայական՝ թիվ 03Ա063471, տրված՝ 06. 02. 2004 թ.

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Թերթը հրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՎԱ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ Խմբագիր
ԱՐԵՎՀԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Քոչարի 20, 4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ.փոստ՝ info@cfoamail.am
Կայք՝ http://cfoa.am/

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում, ք.Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: